ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 102

«14» հոկտեմբերի 2021 թվական **գյուղ Մայիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՄԱՐՄԱՇԵՆ>> ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ 1.7678 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1.2-րդ մասի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի <<Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն վանքեր և եկեղեցիներ հանձնելու մասին>> թիվ 616 որոշման 1-ին կետը և հաշվի առնելով Շիրակի թեմի վարչական խորհրդի նախագահ՝ Ավետիք Աբեղա Սողոմոնյանի 2021 թվականի օգոստոսի 3-ի գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Հայաստանի Հանրապետությայան Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող /բնակավայր՝ Վահրամաբերդ/ <<Մարմաշեն>> վանական համալիրի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-108-0118-0014 կադաստրային ծածկագրով 1.7678 հեկտար մակերեսով հատուկ պահպանվող տարածքի նպատակային նշանակության, պատմական և մշակույթային գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին):

2. Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանյայց

Առաքելական Սուրբ Եկեղեցու (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի) հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝	----------	----------	----------
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------
Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	----------	----------	----------
Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

«14» հոկտեմբերի 2021 թվական
գյուղ Մայիսյան